ու նիւթեր քաղելու համար : Սիրանքով կը դիտէ մարդ այդ անշուք գործարանը որուն մէջ նահապետական սերունդի մը վերջին շառաւիղները ուքնած ու դատած են ընդ երկար, և որուն յուսամուտները կարծես անքրիք աչքեր ըլլային հիմայ՝ գործունէութեամբ առլցուն փառաւոր անցեալի մը վրայ պաղած մնացած . . . :

* * Այսպէս, Արապեան Պօղոս և զաւակունք երկար ատեն կրցած են իշխել մայրաքաղաքիս տպագրական հորիզոնին վրայ և բոլորել արդիւնաւէտ գործունէութիւն մը, հասցունելով նաեւ բազմաթիւ գրաշար ու գրաձուլիչ՝ որոնք իրենց կարգին տէր դարձած են տպարանի և ձուլարանի : — Ապուշեխցին Պօղոս ալեփառ. մօրուքով պատկառելի ծերունի մըն էր. իր խօսքը կը փնտռուէր միշտ, քաղաքական և ազգային հրատապ խնդիրներու մէջ, որովհետեւ ինք ուղղամիտ էր և անաչառ. : Հին Հայու բացատրութեամբ, «սուրբ» մարդ մը նկատուած էր՝ որուն վրայ կը պսպղար ալեւորի պատկառանքն ու վեհութիւնը : Նախազգալով իր մահը՝ երբ որ և է տկարութիւն իսկ չունէր, առջի իրիկուընէ սապէս կը խօսի իրեններուն . «Այս գի-«շեր ժամը 5 ին պիտի մեռնիմ . անկողինս արեւելք-ին ձգեցէք . կէս ժամ առաջ արթնցուցէք «զիս, որպէս զի մնաք-բարովս ըսեմ» : Ու իրաւ ալ որոշեալ ժամուն ձայն կու տան իրեն . ազօթքի և օրհնութեան պէս խօսքեր կը մրթմրթայ և անվրդով համակերպութեամբ մը երկրաձեշտ առնելով՝ ժպիտը շրթունքին կ'աւանդէ հոգին 95 տարեկան հասակին մէջ, 1835 ին : Թաղուած է Օրթաքէօյի նախկին գերեզմանատունը : — Բանի մը շաբաթ առաջ Հ. Կէօփկեանի հետ գացինք դեգերիլ այժմ անբաղ ու լքուած այդ հողվրուիքին մէջ՝ քնացած տապանաքարերու մէջէն անո՛րը գտնելու համար: Բայց գերեզմաննոցը հիւսիսի կողմէն կէս՝ւակէս խորուած և դարտրկուած իր տապաններէն՝ մարզարանի վերածուած էր... : Ի զո՛ւր որոնեցինք անհետացող Ամիրաներու այդ շեղջակոյտին մէջ շիրիմը համեստ գրաղումով այդ մեծանուն Հայուն որ շուրջ երեք քառորդ դար՝ սատարած էր ազգակիցներու և Իսլամներու մտաւորական շարժումին : Հո՛ն, ամայի մահատանին ծայրը, առլեփի մը կուշտին կանգուն մարմարեայ հոյակապ աղբիւր մը իր նոր կառուցուածքին մէջ շա՜տ բան կը խօսէր արդէն՝ հայու անյայտացող դամբաններու մասին . . . :



ԽԱՉԻԿ ԱՐԱՊԵԱՆ

* * Ամբողջ ընտանիքին տպարանական գործունէութիւնները՝ կեդրոնատեղիներու հետ՝ հինգ բուահամարներով տրոհած ըլլալով ԱՐԱՊԵԱՆՑ ԲԱԺԻՆիս սկիզբը, կը բաւականանանք անոնց հրատարակած գիրքերուն և թերթերուն ցուցակը զետեղել հոս՝ ժամանակագրական կարգաւ : — 1799, **Ժամագիրք** (նաեւ 1850 ին) : **Հասց : Տօնացոյց** (որ 1802 ին աւարտած է. վերստին տպուած 1828 ին) : 1802, **Նարեկ** (նաեւ 1807, 1822, 1832, 1836, 1839, 1847, 1852): **Շարական** (նաեւ 1816 ին «Առնեփ Շարական» ձայնքաղ) : 1804, **Ճառ ծննդեան եւ չարչարանաց Յս.ի Քս.ի** : 1805, **Աւետարան** (նաեւ 1823 ին, դարձեալ «Իւղաբերից Աւետարան») : 1806, **Աւագ Սաղմոսի** (հայ. և տաճկ.) : **Բացատրութիւն յորդորական գլխոց** (յունարէնէ թրգմ.) Աղարփդոս սարկաւագի : 1807, **Գիրք մեծագին եւ պատուական ականց** (պրսկ.է թրգմ. Գէորգ դպիր) : **Ներբողեան Ս. Աթոռոյն Էջմիածնի** (Արք. Վ.րդ. Աստապատցի) : 1808, **Ներբող Ս. Հրեշտակապետաց** (Ծնորհալի) : 1814, **Քրիստոնէական**, հարց-պատասխանի (աշխ. փոքր). նաեւ տաճկերէնն՝ ընդարձակ : 1817, **Գործք առաքելոց** (նաեւ 1823, 1839 և 1853. վերջին երկու բուականներուն՝ երկիցս) : 1820, **Բան հրաւէր սիրոյ** : 1824, **Ագաթանգեղոս**, սրբագրեալ ըստ ընտիր օրինակաց : **Թանգարան խրատու** : **Մաշտոց** ընդարձակ, թարգմ. յուն. (նաեւ 1848 ին՝ «Ծիսարան որ է Մաշտոց». դարձեալ «Հայր Մաշտոց») : 1826, ԲԱՌԱՐԱՆ ՊՐՍԿ. - ՀԱՅ (հեղ. Պալաթեցի Գէորգ Դպիր), Յակոբ Տիւզեանի համառօտ քերականութեամբ : **Սահման Ազգ. Ժողովոյն** : **Լապտեր հոգւոյ** (Կարապետ Արքեպսկ.) : **Քերականութիւն Հայոց լեզուի** (Արգրումցի Տ. Մեսրովբ Տ. Յարութիւնեան) ընդարձակ և համառօտ. (նաեւ 1829 ին՝ Փէշտըմալճեան Գր. վարժապետինը, «համառօտ» և «միջակ») : 1827, **Ժամանակագրութիւն Եկեղեցւոյ** «յորում են 3 գիրք, Սաղմոս, Առնեփ ժամագիրք և Տօնացոյց» : **Քերական** լեզուագիտութեան, հայ. և տճկ. :